ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք.Արարատ, 060-88-55-55, ararat.municipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հունիսի 2026 թվականի N 0602-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 09-Ի ԹԻՎ 0122-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի պահանջով և հիմք ընդունելով կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-22042026-03-0128 որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Արարատ համայնքի ղեկավարի 2026 թվականի փետրվարի 09-ի «ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՏՆՕՐԻՆՄԱՆ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 0122-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

ա. Որոշման հղման և 1-ին կետում գրված «բնակելի կառուցապատման» բառակապակցության մեջ «բնակելի» բառը փոխարինել «խառը» բառով:

2. Որոշման 3-րդ կետից հետո ավելացնել 3.1 կետը և շարադրել հետևյալ բովանդակությանբ.

ա) Որոշման 1-ին կետուն նշված 0.00444 հա մակերեսով բնակավայրերի խառը կառուցապատման հողամասի գոհաբառնական նշանակությունը համարել փոփոխված, բնակավայրերի խառը կառուցապատման հողամասից, բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի:

3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման օրենքով սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ**

16 հունիսի 2026 թ.
ք. Արարատ